ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ – Ա

ԱՐԿԱԴԻ ՄԿՐՏԻՉԻ ԲՈՅԱԽՉՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ
ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արկադի Մկրտիչի Բոյախչյանին սեփականության իրավունքով պատկանող «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց 336 խանութ» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0502-0044 կադաստրային ծածկագրով 0,0180 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության և «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց 365» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0502-0045 կադաստրային ծածկագրով 0,003 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց, 26/3 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0502-0051 կադաստրային ծածկագրով 0,00229 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով Արկադի Մկրտիչի Բոյախչյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց 336 խանութ» և «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց 365» հասցեներում գտնվող՝ Արկադի Մկրտիչի Բոյախչյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0502-0044 կադաստրային ծածկագրով 0,0180 հեկտար մակերեսով և 06-006-0502-0045 կադաստրային ծածկագրով 0,003 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Ավետիսյան փողոց, 26/3 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0502-0051 կադաստրային ծածկագրով 0,00229 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարելուն:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 66 123,75 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 2887,5 ՀՀ դրամ):